ՄԶ.

Կը խօսուի՝ հոս յիշատակուած շրջանին մէջ տեղի ունեցած Թուրք–Արաբ ընդհարումներու և անոնցմէ յառաջ եկած ծանր հետևանքներուն վրայ։

Գերապատիւ և ամենապայծառ Տեառն Ստեփաննոսի
Աբբայհօր մերոյ ողջոյն

... Ջժամ մի հոռմի վաղնջական նորոգեալ սակաւ մի, և յիմանալ ոմանց ի տաճկաց, և խնդրել խայծ ինչ, և ի չանսալ զոռոզացն յունաց, ետուն արզուհալ թագաւորին. և նա հրամայեաց փլուցանել. և նոյնժամայն չնչակատարքն հիմնայատակ արարին։... Տաճիկն է ի մեծ վարանս և պատրաստի ի պատերազմ ընդդէմ արաբաց, որպէս հաստատեն բազումք, քանզի ունէին սոքա ի դամասկոս զփաշայ մի սիրելի, և յինքեանս առատաձեռն, զոր թելադրութեամբն աստ եղեալ խզլար աղասիյին տաճիկն փոխեաց. և արաբքն այնչափ բարկացան, և գրգռեցին զբնածին ատելութիւն իւրեանց ի թուրքսն, մինչև աւազօրէն համախմբեալ յարձակեցան ի վերայ ուխտաւորացն մեքքէի, որք ասին հաճըլար. և զբազումս ի նոցանէ կոտորեցին, և զբազումս ընդ երեսս անապատի ցանեցիր արարին. որք անդէն անառաջնորդ և անջուր կոտորեցան. և այսպէս եօթանասուն հազար այր ի միջոյ պակաս արարին. և ինքեանք նոյնհետայն յարձակեալ զմեքքէ և զգոռն առին. և ընդ սահմանս եգիպտոսի և մանաւանդ երուսաղէմի և դամասկեայ յարձակ յարձակ խաղացեալ ի տիրել ամենայնի թեւակոխեն. վասն որոյ և ուխտաւորքն հայոց դեռ տակաւին նստեալ կան ի յոպպէ, երկուցեալ յերեսաց ասպատակաւորացն արաբացւոց։ Այլ թուրքն զայս ամենայն տեսեալ, նոյնժամայն զարմատ չարեացն զխզլար աղասին ետ գլխատել. և զգլուխն ի դուռն պալատ հիւմայինին դնել. և ապա զինն փաշայ սահմանեաց կազմել զչու պատերազմի ի խաղալ ընդդէմ արաբաց։ Սակայն զայս ամենայն գործէ յառաջատեսութիւնն աստուծոյ յաղագս վախճանին, զորմէ ոչ կամիմ սևամանր հնդկաւ ի սպիտակադաշտս նկարել։ Մխլէյիմ օղլուն այրն անհաւատ՝ արտաքսեալ ի տանէ խուլելեանց, ի տան լուտերականի ի պէյօղլուն յորջացեալ, կայ յանկողինս ի յոգւոց պարզել սպաստան եղեալ, զի իբր հոգեվարք է։...

Ցամի Տեառն 1757 *դեկտ.* 20 — *Նուաստ ծառայ*

[Կ. Պոլիս] — *Հ. Մկրտիչ վրդ. [Անան.]*

ՄԷ.

Մէկ երկու տեղեկութիւններու հետ կ՚ակնարկուին նաև երկու ոսկի կանթեղներ, որոնք Երուսաղէմի տաճարին ընծայուած են Սպանիոյ Ֆերտինանտ Զ **(1746–1759)** ***և Բորթուգալի Յովսէփ*** **(1750–1777)** ***թագաւորներուն կողմանէ։***

Վերապատուելի և յարգելի Հայր Գէորգ Վարդապետի
յոյժ բազում սիրով ողջոյն

... եգիպտոսէ եկն գիր Գօնդի լազարին, որ զեկուցանէ վասն վէճին որ այսմիկ ամի եղև յերուսաղէմ վասն կախելոյ նոր երկու կանթեղս, 14 *անձինք ի կռուի հարկանմամբ մեռան և* 100 *քեսայ յարևելցիք և ֆրանկք եդին տուգանս և ապա հաշտեցան և ոսկի կանթեղքն որ մինն ի սպանիայու և միւս բուռթուքալու թագաւորաց յիշատակք, նոքա երուսաղէմայ լեալ որ բազում Խս [= հազարս] ոսկւոց արժէին։ Երկրորդ աւիզն ի նոյն գրի.* 4 *սանճախ եգիպտոսի սպանեալ և ոմանս փախուցեալ և հէքիմ օղլու փաշան*